ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԵԿՏՈՐԻ ՏԱՐԵԿԱՆ

ԱՄՓՈՓ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2020-2021 ուստարի

Հյուսիսային համալսարանը (այսուհետ՝ Համալսարան), առաջնորդվելով՝ Համալսարանի կանոնադրությամբ, ներքին ակտերով, բնագավառը կարգավորող օրենսդրությամբ, հաշվետու ժամանակահատվածի համար Հյուսիսային համալսարանի ռազմավարական պլանով՝ իր առաքելությանը համապատասխան 2020-2021 ուստարում իրականացրել է կրթական գործունեություն հանրակրթական՝ միջնակարգ (լրիվ) ընդհանուր, միջին մասնագիտական, բակալավրի, մագիստրոսի և հետբուհական մասնագիտական կրթական ծրագրերով:

Կրթական ծառայությունների մատուցման գործընթացում կրթության որակի ապահովման գերակայությամբ համալսարանն առաջնորդվել է գործունեության թափանցիկության, հրապարակայնության, հաշվետվողականության, հասանելիության սկզբունքների շարունակականության ապահովմամբ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հաշվետու ժամանակաշրջանը համընկել է համավարակի և ռազմական գործողություններով պայմանավորված արտակարգ դրության հետ, Համալսարանն իրականացրել է իրավիճակներին բնորոշ ռեսուրսների վերաբաշխում,

հնարավորինս ապահովելով որակյալ կրթական գործընթացի անընդհատության համար անհրաժեշտ պայմաններ:

Մասնավորապես՝ ձևավորված մարտահրավերներին համապատասխան, 2020-2021 ուստարում անհրաժեշտություն է առաջացել վերապատրաստումների, խորհրդատվությունների կազմակերպմամբ, առցանց հաղորդակցության ապահովման համար համապատասխան նյութատեխնիկական սարքավորումների ձեռքբերմամբ կրթական գործընթացի մասնակիցների մոտ ձևավորել լրացուցիչ կարողություններ և հմտություններ, որոնք հնարավորություն են ընձեռնել ավանդականից տարբերվող՝ այլ, այդ թվում՝ առցանց ձևաչափով ապահովել ուսումնական գործընթացների բնականոն ընթացքը: Մասնավորապես՝ Համալսարանի համապատասխան ստորաբաժանումների կողմից համատեղ մշակվել և ներդրվել են բուհի պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողական համակազմի համար առցանց դասընթացների կազմակերպման ուղեցույցներ, գործընթացի շրջանակներում Համալսարանի բոլոր աշխատակիցները ընդգրկվել են համապատասխան վերապատրաստումների և/կամ խորհրդատվությունների գործընթացներում, Համալսարանի պաշտոնական կայքի միջոցով ստեղծվել են էլեկտրոնային ինտերակտիվ հարթակներ, որոնք հնարավորություն են տվել ըստ անհրաժեշտության, առցանց ձևաչափով կազմակերպել կրթական գործընթացը, այդ թվում՝ ընդունելության դիմում-հայտերի ընդունումը, էլեկտրոնային ուսումնական դասացուցակների միջոցով

դասապրոցեսի կազմակերպումը, ուսումնական գործընթացի նկատմամբ պատշաճ հսկողությունը, դասապրոցեսի բովանդակության էլեկտրոնային արխիվացումը, կատարողականների ամփոփումը: Առցանց ձևաչափով դասապրոցեսի կազմակերպման արդյունավետությունն ու անընդհատությունն ապահովելու նպատակով՝ Համալսարանի կողմից հատակեցվել են անհրաժեշտ ֆինանսական միջոցներ և այլ անհրաժեշտ ռեսուրսներ՝ լրացուցիչ համակարգչային սարքավարումների ձերքբերման, առցանց հաղորդակցվելու համար անհրաժեշտ ենթակառուցվածքների, այդ թվում՝ վճարովի էլեկտրոնային հարթակների ձերքբերման և գործարկման համար:

Արդյունքում՝ ըստ համապատասխան կրթական ծրագրերի 2020-2021 ուստարում Համալսարանում ուսումնառել են հանրակրթական ծրագրով՝ 67 աշակերտ, միջին մասնագիտական կրթական ծրագրով՝ 113-ը, բակալավրի կրթական ծրագրով՝ 1169 ուսանող, մագիստրոսի կրթական ծրագրով՝ շուրջ 300-ը, հետբուհական կրթական ծրագորվ՝ 7 հայցորդ:

Այսպիսով՝ հաշվետու ժամանակաշրջանում՝ առկա/առցանց, նաև զուգակցված տարբերակներով Համալսարանում համապատասխան աշխատանքների կազմակերպմամբ պլանային ռեժիմով հնարավոր է եղել ապահովել Համալսարանի ընթացիկ գործունեությունը՝ Համալսարանի կանոնադրությամբ և ռազմավարական պլանով նախատեսված այլ ուղղություններով ևս, արդյունքում՝ ի թիվս կրթական չափորոշիչների շրջանակներում կրթական գործընթացի պատշաճ կազմակերպման,

ներառյալ ուսումնամեթոդական փաստաթղթերի արդիականացումը, առցանց և/կամ առկա ռեժիմներով ուսումնաարտադրական պրակտիկաների կազմակերպումը, հնարավոր եղավ նաև բնականոն կերպով գործարկել Համալսարանի կառավարչական և կրթագիտական ենթակառուցվածքները: Մասնավորապես՝ հաշվետու ժամանակաշրջանում Համալսարանում ներդրվել և համապատասխան ուղղություններով գործարկվել է ներբուհական՝ տվյալների էլեկտրոնային կառավարման՝ «Իբուհ» համակարգը:

Հյուսիսային համալսարանի միջազգայնացման, արտաքին կապերի զարգացման, միջազգային բուհերի հետ նոր համագործակցության շրջանակների ձևավորման, մասնագիտական կրթության որակի ապահովման ոլորտում միջազգային համապատասխան կառույցներին անդամակցելուն ուղղված աշխատանքների շրջանակներում համագործակցության պայմանագրեր են կնքվել մի շարք ուսումնական հաստատությունների հետ, այդ թվում՝ Իսպանիայի Գրանադայի համալսարանի հետ՝ Էրազմուս + ծրագրի շրջանակում, Վարշավայի տնտեսագիտության և հումանիտար գիտությունների համալսարանի հետ:

Հաշվետու ժամանակահատվածում, հաղթահարելով ստեղծված իրավիճակային դժվարությունները Համալսարանի գիտահետազոտական գործունեության բնագավառում նախատեսած պլանային աշխատաքների շրջանակներում՝ Համալսարանում կազմակերպվել է ուսանողական գիտաժողով, որի արդյունքները ամփոփվել են «Ուսանողության

գիտահետազոտական ներուժի բացահայտումը՝ որակյալ կրթության ու լավագույն փորձի համադրմամբ» ժողովածուի հրատարակմամբ, ինչպես նաև հաշվետու ժամանակահատվածում ապահովվել է Հյուսիսային համալսարանի «Հյուսիսափայլ» գիտական հոդվածների ժողովածուի հրատարակման աշխատանքների շարունակականությունը: 2020-2021 ուստարում Համալսարանում հետազոտական գործունեության համար նպաստավոր, խթանիչ միջավայր ձևավորելու ուղղությամբ՝ բուհում կազմակերպվել է Հյուսիսային համալսարանի «Լավագույն գիտահետազոտական նախագիծ» դրամաշնորհային մրցույթ՝ 1 մլն ընդհանուր բյուջեով, որի արդյունքների ամփոփումը նախատեսվեց իրականացնել հաջորդ 2021-22 ուսումնական տարվա ընթացքում:

Միաժամանակ՝ թեև հաշվետու ժամանակաշրջանում հայտարարված աշխատանքային և ուսումնառության ռեժիմներում գերակա էին առցանց ձևաչափով վերջիններս կազմկերպելու ՀՀ ԿԳՄՄՆ ուղորդումները, Համալսարանի բնականոն գործունեությունը ենթադրում էր նաև միաժամանակյա առկա ռեժիմով որոշ գործառույթների համար աշխատանքային պայմանների ապահովում, որի նպատակով Համալսարանում ամբողջությամբ ապահովված են եղել նաև առկա ռեժիմով աշխատանքի հնարավորությունները: Այդ թվում՝ ողջ ընթացքում հետևողականորեն պահպանվել են համավարակային սահմանափակումները, որի նպատակով պարբերաբար համալրվել է անհրաժեշտ ախտահանիչ նյութերով և պաշտպանիչ պարագաներով:

Հաշվետու ժամանակահատվածում Համալսարանում շահառուների կարիքների վերհանման, ընթացիկ մշտադիտարկման արդյունքների հիման վրա իրականացվել է ջերմակարգավորվող ջրաբաքերի ձերքբերում, վերանորոգման աշխատանքներ են իրականացվել օժանդակ տնտեսություններում, մասնավորապես՝ սանհանգույցներում, ինչպես նաև շուրջ 5.5 մլն դրամ արժողությամբ ամբողջությամբ հիմնանորոգվել է Համալսարանի ջերմամատակարարող կենտրոնական կաթսայատունը, իսկ լոկալ մեկ կաթսա ամբողջությամբ փոխարինվել է նորով: Հաշվետու ժամանակահատվածը, ստեղծված սոցիալ-տնտեսական իրավիճակով պայմանավորված, լրացուցիչ մարտահրավերներ էր ենթադրում նաև Համալսարանի ֆինանսական կայունության համար, որը սակայն, Համալսարանի կազմակերպահիրավական ձևին բնորոշ ֆինանսական կառավարման մոդելի ճկունության և Համալսարանի ֆինանսական քաղաքականության միջոցով հնարավոր եղավ սահուն հաղթահարել, և արդյունքում՝ նշված ժամանակահատվածում Համալսարանը չմարված ֆինանսական պարտավորություններ չի ունեցել:

Հանրային կյանքում իր կրթադաստիարակչական առաքելությանը հավատարիմ, հաշվետու ժամանակահատվածում Համալսարանը չէր կարող անմասն մնալ, ինչպես արդեն նշվեց հաշվետվության սկզբնամասում, մեր ազգին ու պետությանը վրա հասած արհավիրքին դիմակայելու գործընթացներից, որի շրջանակներում Համալսարանի ուսանողական համակազմի և աշխատակազմի միջոցների հաշվին

կազմակերպվել է շուրջ 4 մլն դրամի օժանդակություն, ինչպես նաև հավաքագրվել են անհրաժեշտ պարենային ապրանքներ և պարագաներ՝ հասանելի դարձնելով այն մեր առավել կարիքավոր հայրենակիցների համար:

Հաշվետու ժամկնակահատվածում պլանավորած, սակայն արտակարգ դրությամբ տեղի չունեցած գործընթացները համապատասխան որոշումներով տեղափոխվել են հաջորդ՝ 2021-22 ուսումնական տարի: